Երևան, 14 սեպտեմբերի, 2019 Կարծիք ԻՊԱՍ(2019)ՀԿ02/09

ԿԱՐԾԻՔ

«Հասարակական կազմակերպությունների» մասին ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծով սահմանված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

“Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների”հասարակական կազմակերպություն
0002 Երևան, ՀՀ, Ամիրյան 11
+374 10 505303
info@prwb.am

Սույն փաստաթուղթում տեղ գտած մտքերն ու կարծիքներն օգտագործելիս խնդրում ենք պահպանել հղումը «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, Կարծիք ԻՊԱՍ(2019)ՀԿ02/09 հղումը

Ծանոթություն

2019թ. օգոստոսի 30-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից հանրային քննարկման է ներկայացվել «Հասարակական կազմակերպությունների» մասին ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը:

Դրանով նախատեսվում է, մասնավորապես, փոփոխություններ կատարել «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ Օրենքի 24-րդ հոդվածում՝ բոլոր հասարակական կազմակերպությունների համար սահմանելով պարտավորություն հրապարակել տարեկան հաշվետվություն, այդ թվում՝ ֆինանսական և գործունեության վերաբերյալ՝ անկախ ֆինանսավորման աղբյուրներից:

Նախատեսվող կարգավորումները հակասում են միավորումների ազատության վերահսկողության համաչափության պահանջներին և հանդիսանում են միջամտություն հասարակական կազմակերպությունների գործունեությանը:

1. Մասնավորապես՝ հասարակական կազմակերպությունների գործունեության նկատմամբ օրենսդրական վերահսկողությունը պետք է իրականացվի պետության կողմից բացառապես Մարդու իրավուքների եվրոպական կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկային համապատասխան[1]: Այսինքն՝ այն պետք է հետապնդի իրավաչափ նպատակ և լինի համաչափ: Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավաչափ նպատակներն են պետական անվտանությունը և հասարակական անվտանգությունը, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելը, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելը: Հասարակական կազմակերպությունների գործունեության թափանցիկության ապահովումն ինքնին չի կարող համարվել իրավաչափ նպատակ, սակայն թափանցիկությունը կարող է միջոց հանդիսանալ Կոնվենցիայով սահմանված նպատակներին հասնելու համար, օրինակ՝ կոռուպցիոն հանցագործությունների կանխումը:
2. Ընդհանուր սկզբունքի համաձայն՝ հանրային ֆինանսական աջակցություն ստացած կազմակերպությունները պետք է հաշվետու լինեն այդ միջոցների օգտագործման համար: Սա ենթադրում է, որ հասարակական կազմակերպությունները պետք է ողջամտորեն հաշվետվություններ ներկայացնեն իրենց կողմից ստացված և ծախսված գումարների վերաբերյալ: Այնուամենայնիվ, նման հաշվետվություններ ներկայացնելու պահանջը չպետք է անհարկի բեռ դնի կազմակերպությունների վրա՝ ներկայացնելու ծախսերի և գործունեության վերաբերյալ մանրամասն տեղեկություններ[2]:
3. Գործող ներպետական օրենսդրության համաձայն՝ հասարակական կազմակերպությունների բոլոր ծախսերը գրանցվում են հարկային մարմնի տվյալների բազայում, իսկ կազմակերպության ֆինանսական մուտքերը՝ բանկերի տվյալների

բազայում: Այսինքն՝ պետության կողմից այդ տեղեկությունների հասանելիությունն արդեն իսկ ապահովված է, և արդյունավետ վարչարարության տեսանկյունից՝ պետությունը կազմակերպության վրա նույն տեղեկությունները նորից ներկայացնելու պահանջ չպետք է դնի, քանի որ պետության նկատմամբ հաշվետվողականության սկզբունքն ինքնին պահպանվում է:

4. Ավելին, անհրաժեշտ է որպեսզի միջամտությունը լինի համաչափ հետապնդվող նպատակին՝ այն է առկա լինի սոցիալական ճնշող պահանջ (pressing social need): Այսինքն, կազմակերպության ֆինանսական և բովանդակային գործունեության կապակցությամբ լրացուցիչ հաշվետվությունների ներկայացման պահանջի համար պետք է բավարար հիմքեր և հիմնավոր ապացույցներ[3]: **Հետևաբար, եթե առկա են հասարակական կազմակերպությունների կողմից հանցավոր գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ բավարար հիմքեր, դրանք պետք է ուսումնասիրվեն պատշաճ քրեաիրավական ընթացակարգով, այլ ոչ բոլոր կազմակերպությունների համար սահմանելով հաշվետվություն ներկայացնելու միատեսակ պահանջ:**
5. Պետության կողմից իրականացվող քաղաքականության արդյունքում չպետք է անհարկի կամ ոչ համաչափ բեռ դրվի հասարակական կազմակերպությունների կողմից իրենց գործունեության վերաբերյալ տեղեկատվության լրացուցիչ տրամադրման համար:

[1] Case of Koretskyy and others v. Ukraine, Application no. 40269/02, 3 April 2007, կետ 38

[2] Բացատրական զեկուցագիր CM/Rec(2007)14, Հանձնարարական Եվրոպայի Խորհրդի անդամ երկրներին Եվրոպայում ոչ կառավարական կազմակերպությունների իրավական կարգավիճակի վերաբերյալ: Պարագրաֆ 62, Հոդված 114

[3] Բացատրական զեկուցագիր CM/Rec(2007)14, Հանձնարարական Եվրոպայի Խորհրդի անդամ երկրներին Եվրոպայում ոչ կառավարական կազմակերպությունների իրավական կարգավիճակի վերաբերյալ: Պարագրաֆ 68, հոդված 122